ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
պարոն Եղիազար Վարդանյանին

իրավաբանական անձ՝ Հայաստանի գործատուների հանրապետական միությունից
(կազմակերպության անվանում)

գտնվելու վայրը՝ ք.Երևան, Վաղարշյան 12
ՀՎՀՀ՝ 02704087
էլեկտրոնային փոստ՝ info@employers.am
հեռախոսահամար՝ +374 95-527-421, +37410-527-421

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ

Հարգելի՛ պարոն Վարդանյան, խնդրում եմ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածի պահանջների համապատասխան՝ Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանին ընդգրկել Քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից հասարակական խորհրդի կազմում:

Մարզը կամ համայնքը, որտեղ հայտատու իրավաբանական անձը ծավալում է գործունեություն՝ ՀՀ բոլոր մարզեր:

Քաղաքաշինության բնագավառի գործունեության այն ոլորտը, որում հայտատու իրավաբանական անձն ունի համապատասխան գործունեության փորձ կամ մասնագիտական փորձառություն. Միության փորձառությանն ու քաղաքաշինության բնագավառի գործունեության ոլորտին առնչվող գործունեությանը կարող եք ծանոթանալ հայտին կից 4.1. Հավելվածում:

Իրավաբանական անձի հիմնական ներկայացուցիչ՝ Վահագն Սիրվենի Համբարձումյան
(անուն, հայրանուն, ազգանուն)

Անձնագրային տվյալներ՝ AL0520098

Էլեկտրոնային փոստ, հեռախոսահամար՝ president@employers.am; 095-009955

Լրացուցիչ նշումներ.

Ներկայացնելով սույն հայտը՝ տեղեկացնում եմ, որ առաջնորդվելով իր կանոնադրական նպատակներով և սոցիալական գործընկերության զարգացման առաքելությամբ՝ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը հայտնում է իր պատրաստակամությունը ընդգրկվելու Քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից հասարակական խորհրդում՝ որպես ՀՀ կառավարության միակ պաշտոնական սոցիալական գործընկեր և գործատուների շահերը ներկայացնող կառույց՝ ապահովելու քաղաքացիական հասարակության մասնակցությունը ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի առաջնահերթությունների և նպատակների իրականացման գործընթացին, խթանելու մասնակցային կառավարումը և քաղաքականության մշակման գործընթացներին շահառու խմբերի ներգրավվածությունը:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից հասարակական խորհրդում ներկայացվում է Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանի թեկնածությունը: Միաժամանակ տեղեկացնում եմ նաև, որ հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի N 835-Լ որոշումը (22.09.2025թ.)՝ «Հայաստանի Հանրապետության նախարարներին և կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև այդ որոշման Հավելված 4-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարին կից Հասարակական Խորհուրդների ձևավորման կարգի 5-րդ գլխի 25-րդ կետը՝ հաշվի առնելով կառավարությանը ենթակա մարմնի հետ տվյալ ժամանակահատվածում քննարկվող հարցերի բնույթը և ոլորտը՝ խորհրդի կազմում ընդգրկված կազմակերպությունները կարող են խորհրդում փոխել իրենց ներկայացուցչին քննարկվող հարցերի բնույթի և ոլորտի վերաբերյալ ավելի խորը մասնագիտական ու փորձագիտական գիտելիքներ ունեցող ներկայացուցչով:

Հայտին կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը՝

1. կազմակերպության պետական գրանցման վկայականի կամ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենը, կանոնադրության պատճենը, ֆիզիկական անձի անձնագրի պատճենը, հաշվառման հասցեն,
2. կազմակերպության, ֆիզիկական անձի կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը),
3. կազմակերպության այն հիմնական ներկայացուցչի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը), որը մասնակցելու է խորհրդի աշխատանքներին,
4. կազմակերպության գործունեության փորձը կամ ֆիզիկական անձի մասնագիտական փորձառությունը, նախանշված ոլորտը և տվյալ ոլորտում գործունեություն ծավալելու ժամանակահատվածը հիմնավորող առկա փաստաթղթեր (պահանջվող տեղեկությունները կարող են պարունակել պայմանագիրը, հանձնման ընդունման ակտը, պետական մարմնից կամ միջազգային կազմակերպությունից ստացված պաշտոնական նամակը և այլն:

Առդիր՝ 5 0 էջ:

Հայտատու իրավաբանական անձի ղեկավար՝

Վահագն Համբարձումյան

07 դեկտեմբեր, 2025թ